ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2018- 22.03/211

22.03.2018 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ

2013թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը, իսկ 2013թ. սեպտեմբերի 13-ին Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017թթ. ծրագիրը: Ծրագրում ներառված որոշ միջոցառումների համակատարող են հանդիսանում ՀՀ մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հայեցակարգի հետևյալ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝

Միջոցառում 6. Փորձնական ծրագրի իրականացման շրջանակում հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի /2014-2015թթ./

- Արդյո՞ք ստեղծվել են միջոցառմամբ նախատեսված շուրջօրյա խնամքի տները, եթե այո՝ որ համայնքներում և որքան ֆինանսական միջոցներ է ծախսվել դրանց ստեղծման և հետագա գործունեության համար, ինչ աղբյուրներից

Միջոցառում 8. Ստեղծել ցերեկային կենտրոններ մտավոր և հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների համար /2014-2017թթ./

- Արդյո՞ք ստեղծվել են միջոցառմամբ նախատեսված ցերեկային կենտրոնները, եթե այո՝ որ համայնքներում և որքան ֆինանսական միջոցներ է ծախսվել դրանց ստեղծման և հետագա գործունեության համար, ինչ աղբյուրներից

Միջոցառում 10. Ստեղծել խնամքի շուրջօրյա և ցերեկային կենտրոններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար, աջակցել մասնավոր հատվածում կամ ՀԿ-ների կողմից ստեղծված նման կենտրոնների կարողությունների զարգացմանը /2015-2016թթ./

- Արդյո՞ք ստեղծվել են խնամքի շուրջօրյա և ցերեկային կենտրոններ տարեց անձանց համար, եթե այո՝ որ համայնքներում և որքան ֆինանսական միջոցներ է ծախսվել դրանց ստեղծման և հետագա գործունեության համար, ինչ աղբյուրներից

1809
28.03.2018թ

- Արդյո՞ք տարվել են աշխատանքներ՝ ուղղված մասնավոր հատվածում կամ ՀԿ-ների կողմից ստեղծված նման կենտրոնների կարողությունների զարգացմանը, եթե այո՝ ինչ աշխատանքներ, ում կողմից, որ կենտրոնների կարողություններն են զարգացել, որքան ֆինանսական միջոցներ են հատկացվել և ինչ աղբյուրներից

Միջոցառում 11. Ուսումնասիրել և գնահատել հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի շուրջօրյա և ցերեկային կենտրոնների գործունեությունը և գնահատման արդյունքում ներկայացնել առաջարկություններ նրանց պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ /2014-2017թթ./

- Խնամքի շուրջօրյա և ցերեկային քանի՞ կենտրոնի գործունեություն է ուսումնասիրվել, քանիսի՞ համար է առաջարկություն ներկայացվել պետական աջակցություն ցուցաբերելու համար և քանի՞սն է ստացել նշված աջակցությունը
- Որքա՞ն է կազմում յուրաքանչյուր կենտրոնի ֆինանսավորման չափը պետական բյուջեից և որքա՞ն համայնքային բյուջեից, որքա՞ն է կազմում յուրաքանչյուր կենտրոնի տարեկան բյուջեն

Միջոցառում 13. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների /դեպք վարողների/ կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների քարտեզագրման և նրանց համապատասխան կազմակերպություններ ուղղորդելու նպատակով ընդլայնել համագործակցությունը նշված կենտրոնների և ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև /2014-2017թթ./

- Արդյո՞ք քարտեզագրվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները *(խնդրում եմ տրամադրել քարտեզագրման արդյունքները)*
- Վայոց ձորի մարզում 2014-2017թթ. ընթացքում սոցիալական աշխատողների /դեպք վարողների/ կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քանի՞ անձ է ուղղորդվել ծառայություններ տրամադրող կազմակերպություններ *(խնդրում եմ տրամադրել կազմակերպությունների անվանումները)*

Միջոցառում 14. Աջակցել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց ձեռքի աշխատանքներից հասցեական նվիրատվություններ կատարելու միջոցով բարեգործական ակցիաներ կազմակերպելու գործում /2014-2017թթ./

- 2014-2017թթ. ի՞նչ միջոցառումներ են իրականացվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց աջակցման նպատակով

Միջոցառում 16. Հոգեկան առողջության խնդիրների լուծման ոլորտում համագործակցության ապահովում բոլոր մակարդակներում /2014-2017թթ./

- Արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ հոգեկան առողջության խնդիրների լուծման ոլորտում տարբեր մակարդակներում համագործակցության ապահովման ու ընդլայնման ուղղությամբ, եթե այո՝ խնդրում եմ տեղեկացնել այդ աշխատանքների մասին

Միջոցառում 19. Կազմակերպել հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ /2013-2017թթ./

- 2013-2017թթ. ընթացքում հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մասնավորապես քանի՞ գիտաժողով, սեմինար, քննարկում է իրականացվել, ու՞մ կողմից են դրանք կազմակերպվել, որպես շահագրգիռ կողմ ովքե՞ր են մասնակցել նշված միջոցառումներին, արդյո՞ք կատարվել է սեմինարների գնահատում *(խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, կազմակերպիչների, միջոցառումների տեսակի և մասնակիցների թվի, ինչպես նաև տրամադրել միջոցառումների օրակարգերը և գնահատման արդյունքները առկայության դեպքում)*

- Իրականացվել է արդյո՞ք միջոցառման ակնկալվող արդյունքում[1] նշված ուսումնասիրություն, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքները:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն՝

- Վայոց ձորի մարզպետարանի կողմից որքա՞ն ֆինանսական միջոցներ է ծախսվել հայեցակարգի միջոցառումների կատարման համար, դրանից որքանն է հատկացվել պետական բյուջեից, որքանը՝ համայնքային բյուջեից և որքա՞նը՝ դոնոր կազմակերպություններից,
- արդյո՞ք մարզպետարանի կողմից իրականացվել են այլ գործողություններ՝ ուղղված հայեցակարգի իրականացմանը, եթե այո՝ որ միջոցառումների իրականացմանն են ուղղված եղել և ինչ գործողություններ են,
- արդյո՞ք գնահատվել է հայեցակարգի իրականացումը, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268

[1] Ուլորտի միջազգային փորձի փոխանակում և ուսումնասիրություն, վերապատրաստված մասնագետների առկայություն